ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի քննություն

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Temps imparti / Ժամանակը: 2 heures / 2 ժամ
Les dictionnaires ne sont pas autorisés. / Բառարանների գործածումն արգելվում է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

Առաջադրանք 1. (22 միավոր)
1.1. առաջադրանքը գնահատվում է 18 միավոր: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,5 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 1 միավոր:
1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր:
Առաջադրանք 2. (14 միավոր)
2.1. առաջադրանքի համար տրվում է 6 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
2.2. առաջադրանքի համար տրվում է 8 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 3. (16 միավոր)
3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 6-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
3.3. առաջադրանքը գնահատվում է 4 միավորով. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր:
Առաջադրանք 4. (16 միավոր)
4.1. և 4.2. առաջադրանքները գնահատվում են 4-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
4.3. առաջադրանքը գնահատվում է 8 միավոր յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 5.(12)
5.1. և 5.2. առաջադրանքները գնահատվում են 4-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր:
5.3. և 5.4. առաջադրանքները գնահատվում են 2-ական միավոր:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,5 միավոր:

Գրադարանային նյութ

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Առաջադրանք 1 (22 միավոր)

1.1. Անհրաժեշտության դեպքում գրել տառերը և կետադրել բնագիրը (18 միավոր):

Դահլիճը լեփ- լեցուն էր. հանդիսատեսը ոչ այնքան բեմին էր նայում, որքան Սարոյանին: Ես ինքս էլ կողքից հետևում էի դիմախաղերին՝ հասկանալու՝ հավանու՞մ է բեմադրությունը:

Դեռ առաջին հանդիպումներից էի նկատել, որ նրա դիմախաղերն ու հայացքը առհասարակ շատ են խոսուն, որ վայրկենական արագությամբ է նա արձագանքում այն ամենին, ինչին նայում է:

Ինձ համար Սարոյան մարդու և Սարոյան գրողի մեջ ամենաանբացատրելին թերևս այն է, թե ինչպես է, որ Ամերիկայում ծնված, ազգերի՝ գլխապտույտ առաջացնող խառնարանում մեծացած մարդը չի կորցրել արյունակցական կապը իր ակունքների հետ: Մինչդեռ շատ դյուրին էր այն կորցնելը. չէ՞ որ կան օրինակներ, նշանավոր գրողների օրինակներ:

Բայց ահա Սարոյանի հետ շփվելիս ես հաճախ մոռանում էի, որ դիմացս Ամերիկայի ժամանակակից խոշոր գրողներից ու մեծագույն մտավորականներից մեկն է՝ արտաքուստ պարզ ու անպաճույճ, բայց այդ պարզության տակ սքողված էին փիլիսոփայական խորը ընդհանրացումներ:

Ակունքը, իրավամբ, մեծ խորհուրդ ուներ գրողի համար: Իր խոսքը կրկնել չսիրելով՝ հաճախ էր պատմում ծնողների՝ Արմենակ և Թագուհի Սարոյանների ծննդավայրը՝ Բիթլիս(,) կատարած ուղևորության մասին.

-(«) Դեռ այն ժամանակ հասկացա՝ հայ եմ, Բիթլիսից եմ գալիս, ու սկսեցի գրել (»):

1.2. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով (2 միավոր): *Ճիշտ պատասխանը բացակայում է, ուստի բոլոր դիմորդներին տրվել է 2 միավոր:*

ա) ՄԱՏԹԵՈՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ, ՄԵԾ ՀԱՅՔ, ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ

բ) ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ, ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ, ԼՅՈՒԴՈՎԻԿՈՍ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

գ) ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ԵՐԿՐՈՐԴ, ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐՁՐ ՀԱՅՔ, ՀՐԱՅՐ ԴԺՈԽՔ

դ) ԵՐԵՎԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՓՐԱՏ, ԾՈՓԱՑ ԱՇԽԱՐՀ

1.3. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են գծիկով (2 միավոր).

ա) քաջ (առողջ), դույզն (ինչ), հանովի (դնովի), կցել (կցմցել), դուռ (դրկից)

բ) բառ (մասնիկ), մատուռ (դամբարան), հուր (հավիտյան), մեն (մենակ), հականե (հանվանե)

գ) հայ (ռուսական), հյուսիս (արևելք), թել (ասեղ), բեղ (մորուք), տիկնանց (տիկին)

դ) թել (պանիր), վեր (վերի), վագոն (ռեստորան), պատեհ (անպատեհ), տարեց (տարի)

2. Առաջադրանք 2 (14 միավոր)

2.1. Տրած բառերից մեկական արմատ (խառը կարգով) ընտրելով՝ (յուրաքանչյուր բաղադրիչ գործածել մեկ անգամ) կազմել վեց բարդ բառ (6 միավոր):

տոհմատուն	կանոնակարգ	**տնանկ//տոհմանուն**
ատամնացավ	գնանկում	**ուսադիր**
ուսակապ	կատվախոտ	**գլխարկ//գլխագին**
պարագլուխ	շարադրանք	**կանոնագիր**
գրաճանաչ	սեղանատուն	**խոտաճարակ**
ճարակել	անվանարկել	**սեղանատամ**

2.2. Ընդգծել նախածանց ունեցող բառերը (8 միավոր):

Ընդերքային, **զարտուղի**, համայնապատկեր, **ներհակորեն**, տարածաչափություն, **պարականոն**, ներումնալից, տարողունակ, համեմատաբար, ապահարզան, նախանձախնդիր, **առապար**, ներքնահարկ, **վերակացու**, պարաքայլ, ապաստանել, ստորոգի, **ստորոգյալ**, **շարադրանք**, առատահոս, **նախապատիվ**, վերընթաց:

Առաջադրանք 3 (16 միավոր)

3.1. Ընտրել և գրել հոմանիշների վեց զույգ (6 միավոր).

Մտրակել, ծեքծեքել, աճապարել, ձոնել, պաշտել, պչրել, զգվել, խարազանել, փութալ, հեկեկալ, երկրպագել, ներբողել, հեծել, մամլել:

մտրակել- խարազանել
ծեքծեքել-պչրել
աճապարել-փութալ
ձոնել-ներբողել
պաշտել-երկրպագել
հեկեկալ-հեծել

3.2. Ընտրել և գրել հականիշների վեց զույգ (6 միավոր).

Վտիտ, բռնազբոսիկ, ողորկ, չքմեղ, ըմբոստ, մշտամնա, անկեղծ, թերուս, անպաճույճ, հնազանդ, մեղսավոր, զարդարուն, անհարթ, վաղանցիկ:

բռնազբոսիկ-անկեղծ
ողորկ-անհարթ
չքմեղ-մեղսավոր
անպաճույճ-զարդարուն
հնազանդ-ըմբոստ
մշտամնա-վաղանցիկ

3. 3. Գտնել այն շարքերը, որոնցում դարձվածքների իմաստների սխալ բացատրություն կա (4 միավոր).

ա) պատին դեմ անել-նեղել, ձեռքը քարի տակ-չունևոր, սիրտը թուլանալ-նվաղել, լեզու առնել-հանդգնել
բ) փափուկ սիրտ- նրբազգաց, աշխարհից կուշտ-փորձառու, արյունը եռալ- զայրանալ, բերանին նայել- հնազանդվել
գ) վերջին շապիկը ծախել- սնանկանալ, վրա ընկնել- հասնել, շունչ քաշել- հանգստանալ, վիզ ծռել- խնդրել
դ) ոգի առնել- ոգեշնչվել, ոտքը կախ գցել- հապաղել, ոտքերն ամպոտ- անսխալական, քիթը կախ- տրտում
ե) կրակի կտոր-չար, ձեռքը բռնել- թույլ չտալ, ճամփա պահել- սպասել, մեջքը պինդ-ունևոր
զ) ջրի պես-սահուն, ծնկի իջնել- հնազանդվել, վզին կապել- պարտադրել, փեշի տակ առնել- խնամել

Առաջադրանք 4 (16 միավոր)

4.1. Ընդգծել նախադասության մտքին համապատասխանող բառը (4 միավոր):

ա) Այսպիսի ռազմավարությամբ հնարավոր է շրջանցել (վերահաս, վերահասու) վտանգը:
բ) Հարցը (վերաբերվում է, վերաբերում է) գների ինդեքսի սպասվող աճին:
գ) Նա միշտ էլ աչքի է ընկել իր մասնագիտական (պատրաստակամությամբ, պատրաստականությամբ):
դ) Հիշի՛ր, որ դատարանում կեղծ (ցուցում, ցուցմունք) տալը նույնպես հանցանք է:

4.2. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (4 միավոր):

Միջօրեին **տաքանում է/տաքացած/տաքացող** հողը, այգեստանները **տիվանդորրի** մեջ անշարժանում են. **գոյանում է** կարծես հանճարեղ նկարչի կախարդական **վրձնահարված(ներ)ից/վրձնահարված(ներ)ով** մի չնաշխարհիկ բնանկար:

(գոյանալ, տաքանալ, վրձնահարված, տիվանդորր)

4.3. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (8 միավոր):

Դիտանցքներ, **հանձին տնօրենի,** քծնվել, **սպիներ,** ոչ մեկ, առանց գիրք, մի՛ փախչեք, լվացա, **թռի՛ր**, ուղեցույցեր, **մեզ մոտ,** ի օգուտ, փախնում եմ, **մզացրած,** ոտնաձայններ,

Ծրագրային բնույթով

բացի այդ, խաչակնքել, իրեն մոտ, քեզ մոտից, հիշացնել , նախօրոք կանխազգալ, բացառությամբ քեզ:

Առաջադրանք 5 (12 միավոր)

5.1. Նշել այն նախադասություն(ներ)ը, որ(ոնց)ում խնդրառության սխալ կա, և ուղղել (4 միավոր):

ա) Փախչելու նման մի միտք անցավ նրա գլխով այդ առավոտ, երբ, բազրիքին հենված, պատմում էր անցյալից:

բ) Նրա բոլոր ~~ձեռնարկումներին~~ ը մերձավորները միշտ սատարում էին:

գ) Բանալիների տրցակը, որ քարշ էր ընկած ժանգոտած սողնակից, օրորվում էր ուժեղ քամուց:

դ) Նրա որդուն նշանակել էին այդ պաշտոնին, ինչի համար նա երախտապարտ էր ճակատագրին:

5.2. Նշել այն նախադասությունները, որոնցում համաձայնության սխալ կա, և ուղղել սխալները (4 միավոր):

ա) Արշակունիների՝ որպես թագավորական տոհմի վերացումից հետո մի շարք իրավունքների հետ զորքի կառավարումը ևս անցավ նախարարների ձեռքը:

բ) Ոչ մի տերև, ոչ մի ծաղիկ ~~չէին~~ չէր շարժվում քամուց. բնությունը նիրհել էր:

գ) Յուրաքանչյուր ժողովրդի կյանքում կարելի է առանձնացնել մի քանի նշանակալի իրողություն, որ պայմանավորում է նրա հետագա գոյությունը:

դ) Ամերիկայի Միացյալ Նահանգները որոշում է ընդունել Ռուսաստանի դեմ համապատասխան պատժամիջոցներ կիրառելու մասին:

5.3. Նշել բարդ ստորադասական նախադասությունը պարզի փոխակերպելու ճիշտ տարբերակը (2 միավոր):

Ես չեմ պատմում այդ բանաստեղծի մասին, որ երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովն է նետել:

ա) Ես չեմ պատմելու երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովը նետած բանաստեղծի մասին:

բ) Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովը նետած այդ բանաստեղծի մասին:

գ) Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմող բանաստեղծի՝ իրեն ծովը նետելու մասին:

դ) Ես չեմ պատմելու երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմելիս իրեն ծովը նետած այդ բանաստեղծի մասին:

5.4. Նշել ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպելու ճիշտ տարբերակը (2 միավոր):

Հիշում եմ մորս խոսքերը, որ ես իր հետնորդն եմ և գնում եմ՝ իր գործը շարունակելու:

ա) «Դու իմ հետնորդն ես,- հիշում եմ մորս խոսքերը,- և գնում ես՝ իմ գործը շարունակելու»:

բ) «Դու իմ հետնորդն ես և գնում ես՝ իմ գործը շարունակելու»,- հիշում եմ մորս խոսքերը:

գ) «Դու իմ հետնորդն ես»,- հիշում եմ մորս խոսքերը և գնում եմ՝ իր գործը շարունակելու:

դ) Հիշում եմ մորս խոսքերը. «Դու իմ հետնորդն ես»,- և գնում եմ՝ իր գործը շարունակելու:

Փորձնական բնություն